## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/130 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

**01 սեպտեմբերի 2025թ.**

2025թ. սեպտեմբերի 01-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ՀՔԵՅ արդիականացման աշխատանքների ձեռքբերման ԵՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/130 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Լ. Մակարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ծառայության պետ, |
| Թ. Աթայան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ծառայության «Էլեկտրաէներգիայի հաշվառման և վերահսկման» խմբի ղեկավար, |
| Ս. Իգիթյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ծառայության «Էլեկտրաէներգիայի հաշվառման և վերահսկման» խմբի առաջատար մասնագետ , |
| Կ. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ուղեմասի պետ , |
| Վ. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ծառայության «Մալուխային ցանցեր և լուսավորություն» ուղեմասի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Մակարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. սեպտեմբերի 01-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Համակցված քարշային իջեցնող N3 (Սասունցի Դավիթ կայարան) ենթակայանի արդիականացման աշխատանքներ | 526,871,484.69 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 112 | 096301080, 098245014, 099245557 | rafojakh@gmail.com | 00456403 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի անվանումը | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | Համակցված քարշային իջեցնող N3 (Սասունցի Դավիթ կայարան) ենթակայանի արդիականացման աշխատանքներ | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | 526,871,484.69 | 438,892,500.00 | 87,778,500.00 | 526,671,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025թ. սեպտեմբերի 01-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մանակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025թ. սեպտեմբերի 01-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | X | 438,892,500.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ. սեպտեմբերի 01-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի իրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Մակարյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Թ. Աթայան

Ս. Իգիթյան

Կ. Գրիգորյան

Վ. Գրիգորյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան